

ԵԲԱԿՈՆԵՅԱ ԿԱՊԵՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

21 հոկտեմբերի 22-ում Ֆրանսիայի Նորանշանակ դեսպանին



առաքելություն Ֆրանսիայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Մայր Աթոռի եւ Ֆրանսիայի դեսպանատան միջեւ ձեւավորվել են ջերմ հարաբերություններ եւ արդյունավետ փոխգործակցություն: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ հայ-ֆրանսիական բարեկամական կապերի խորացման գործում իր ներդրումն ունի նաեւ Ֆրանսիայի հայկական համայնքը: Հայոց Հովվապետը հույս հայտնեց, որ տիկին դեսպանի առաքելության ընթացքում երկու երկրների բարեկամական հարաբերություններն առավել կգարգանան ու կամրապնդվեն:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի դեմս դեսպան տիկին ԱՄՆ Լույսիյի՝ իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին՝ համավարակի ընթացքում, ինչպես նաեւ պատերազմի ու հետպատերազմյա ծանր օրերին Ֆրանսիայում եւ հայ ժողովրդին բերած աջակցության եւ զորակցության համար:

Իր հերթին դեսպան ԱՄՆ Լույսն երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար եւ վերահաստատեց, որ Ֆրանսիան շարունակելու է տարբեր ոլորտներում բազմակողմանի աջակցություն ցուցաբերել Ֆրանսիային:

հյուրերին, կարելու նկատեց միջազգային մամուլի փոխանակումներին անցկացումը: Հայոց Հովվապետը հույս հայտնեց, որ գիտաժողովի մասնակիցների զեկույցներն ու քննարկումներն իրենց օգտակարությունը կունենան հայ ժողովրդի պատմության դժվարին այդ ժամանակաշրջանի ուսումնասիրության եւ խնդիրների արծարծման առումով: Անդրադառնալով մեկ դար առաջ հայրենիքում տիրող ծանր եւ բարդ իրավիճակին՝ Նորին Սրբությունը վստահությամբ ընդգծեց, որ հայ ժողովուրդն իր հավատքի ու լավատեսական ոգու շնորհիվ այսօր եւս կկարողանա հաղթահարել առկա բոլոր դժվարություններն ու փորձությունները՝ կերտելով գալիք սերունդների համար ապահով, խաղաղ եւ բարձր երկիր:

Հանդիպմանը հարեզին երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը անդրադարձավ նաեւ

վերջերս հռոմ (Իտալիա) եւ Մոսկվա (ՌԴ) կատարած իր այցելություններին, որոնց ընթացքում արծարծվել են արցախյան պատերազմի հետեւանքով առաջացած մատահրավերները եւ մեր ժողովրդին հուզող խնդիրները, մասնավորապես՝ Ադրբեջանում պահվող գերիների վերադարձի, ՀՀ սահմանների նկատմամբ ունեցվող ռազմական վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ հարցեր:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց գիտաժողովի մասնակիցների հարցերին՝ Քույր եկեղեցիների հետ ձեւավորված սերտ գործակցության եւ Մայր Աթոռի կողմից Արցախի հոգեւոր ու պատմամշակութային արժեքների պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ:

28 հոկտեմբերի Սուրբ Աթոռի փոխպետքարտուղարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայում գտնվող Սուրբ Աթոռի պետքարտուղարի ընդհանուր հարցերով փոխանորդ արք. Էդգար Պենյա Պառային եւ նրա պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Վատիկանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կարեն Նազարյանի ու Սուրբ Աթոռի առաքելական նվիրակ արք. Ժոզե Ալեյինո Բետանկուրի:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Սուրբ Աթոռի դիվանագիտական մշտական ներկայացուցչության բացումը երեւանում Վատիկանի եւ Մայր Աթոռի միջեւ համագործակցության նոր հնարավորություններ կընձեռնի: Հայոց Հայրապետը հաստատեց, որ Մայր Աթոռի եւ Վատիկանի միջեւ ձեւավորվել են ջերմ եւ եղբայրական հարաբերություններ, որոնց վառ ապացույցներն են հռոմի Սրբազան Քահանայապետերի՝ Հովհաննես-Պողոս երկրորդ եւ Ֆրանցիսկո Պապերի այցելությունները Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչպես նաեւ Սուրբ Աթոռում Հայոց ցեղասպանության 100-ամյակի առիթով կազմակերպված միջոցառումն ու սուրբ Գրիգոր Նարեկացուն տիեզերական վարդապետ հռչակելը: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Մայր Աթոռի ներկայացուցչությունը Վատիկանում եւս նպաստում է երկու եկեղեցիների բարեկամական կապերի առավել զորացմանն ու խորացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը երախտագիտություն հայտնեց Սուրբ Աթոռին եւ նրա գահակալին՝ արցախյան 44-օրյա պատերազմի ու հետպատերազմյա ծանր օրերին Հայաստանին եւ հայ ժողովրդին բերած աջակցության, զորակցության, ինչպես նաեւ ռազմագերիների վերադարձման գործում ներդրած ջանքերի համար:

Հայոց Հովվապետը նաեւ իր եղբայրական ողջույններն ու բարեմաղաքները փոխանցեց հռոմի Սրբազան Քահանայապետին:



Իր հերթին Սուրբ Աթոռի փոխպետքարտուղար արք. Էդգար Պենյա Պառայն, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Նորին Սրբությանը փոխանցեց հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկո Պապի բարեմաղաքությունները: Վատիկանի փոխպետքարտուղարը նշեց, որ Սուրբ Աթոռի առաքելական մշտական նվիրակության բացումը Հայաստանում էլ ավելի կամրապնդի երկու եկեղեցիների միջեւ ձեւավորված գործակցությունը:

Զրույցի ընթացքում Վատիկանի փոխպետքարտուղարն Ամենայն Հայոց Հայրապետին հավաստիացրեց, որ Սուրբ Աթոռը կշարունակի ամեն ջանք գործադրել հետպատերազմյա խնդիրների, ի մասնավոր՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության եւ հայ ռազմագերիների վերադարձման հարցը համագույնելու համար:

21 հոկտեմբերի «Հայաստանը եւ տարածաշրջանը. դասեր, արժեւորումներ, հեռանկարներ» խորագրով միջազգային գիտաժողովի մասնակիցներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հոկտեմբերի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկած «Հայաստանը եւ տարածաշրջանը. դասեր, արժեւորումներ, հեռանկարներ» խորագրով միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՀ բյուրոյի ներկայացուցիչ, Հայ դատի

կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատրյանին:

Ներկայացնելով գիտաժողովի մասնակիցներին՝ տիար Հակոբ Տեր-Խաչատրյանն ընդունելության համար շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը:

Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարենադրանքները փոխանցեց նորընծա սարկավագներին

Նոյեմբերի 25-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սույն թվականի հոկտեմբերի 10-ին Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի մայր եկեղեցում սարկավագական ձեռնադրության արժանացած Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2 լսարանի 25 սաներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Շահե Ժ. վրդ. Ամանյանի:

Հանդիպմանը Մուշեղ սրբազանը Նորին Սրբությանը ներկայացրեց նորընծա սարկավագներին՝ վստահեցնելով, որ նրանցից յուրաքանչյուրը լիովին գիտակցում է իր կոչման կարեւորությունն ու առաքելությունը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարենադրանքները փոխանցեց ճեմարանականներին՝ շնորհավորելով սարկավագ ձեռնադրվելու կապակցությամբ: Նորին Սրբությունը նորընծա սարկավագներին պատգամեց մշտապես հավատարիմ մնալ իրենց ուխտին, ամենուր եւ ամեն ժամ նվիրյալ ծառայություն իրականացնել Հայ եկեղեցու



անդաստանում, կյանքի տարբեր իրավիճակներում դրսեւորել ս. Ստեփանոս Նախասարկավագի նախանձախնդրությունն ու զոհողության ոգին:

Հայոց Հովվապետը հորդորեց ճեմարանական սարկավագներին իրենց վարքագծով եւ անձնվեր ծառայասիրությամբ հավելել Հայոց եկեղեցու եւ հայրենիքի պատիվն ու համբավը՝ ընդօրինակելով արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում անսակարկ եւ անմահանջ ծառայությունն իրականացրած եկեղեցականների նվիրումն ու ինքնազոհողության բարձր գիտակցումը:

Իր հերթին ճեմարանի տեսուչ Շահե Ժ. վրդ. Ամանյանը երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին հոգեւոր բարձրագույն հաստատության նկատմամբ ցուցաբերվող հայրական հոգածության եւ ուշադրության համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց սարկավագներին՝ ընծայելով նրանց ժամագրքեր:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Յովնան արք. Տէրտէանի հովուական այցը Սան Ֆրանցիսկոյի Ս. Յովհաննէս եկեղեցի



9 հոկտեմբեր 2021-ին թեմիս բարեխնամ առաջնորդ Յովնան արք. Տէրտէանը հովուական այցով մեկնեցաւ Սան Ֆրանցիսկոյի Ս. Յովհաննէս եկեղեցի: Առաջնորդ սրբազան իւր մեծ ուրախութեամբ եւ բարի գալուստի մաղթանքով դիմաւորեցին եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, ծխական եւ յարակից մարմիններու անդամները:

Նոյն օրը, ձեռամբ առաջնորդ սրբազան իւր, մատուցուեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ, յընթացք ուրու ս. Սեղանին վրայ կը սպասաւորէր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մեսրոպ քնյ. Աշը:

Սրբազան հայրը քարոզի ընդմէջէն յատուկ կերպով իր ջերմ ու քաջալերանքի սրտագին խօսքերը եւ օրհնութիւնը փոխանցեց ծուխի հոգեւոր հովիւին՝ գնահատելով անոր գործադրած մեծ ջանքերը՝ կիրակնօրեայ դպրոցներու զարգացման եւ կայացման գործին, հորդորելով նաեւ, որ առաւել մեծ նվիրումով, անկոտրում կամքով ու եռանդով շարունակէ իր ծառայութիւնը՝ ի նպաստ ծուխի զարգացմանը եւ յառաջխաղացմանը:

Այնուհետեւ սրբազան իւր ձեռամբ օծուեց ս. Գայանէ կոյսի նկարով սրբապատկերը՝ նուիրաբերուած Բալասանեան ընտանիքի կողմէ ի յիշատակ իրենց վաղամեռիկ դստեր:

Ս. Պատարագի վերջաւորութեանը կատարուեց հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն՝ ի յիշատակ արցախեան 44-օրեայ պատերազմի հերոս նահատակաց:

Հոգեհանգստեան պաշտօնէն անմիջապէս յետոյ տեղի ունեցաւ շնորհաբաշխութիւն, յընթացք ուրի Յովնան արք. Տէրտէանը, ի գնահատանք Ս. Յովհաննէս եկեղեցւոյ ծխական կեանքից ներս ունեցած երկարամեայ ծառայութեան ու նուիրումի, «Հայ Ոգի» շքանշանով պարգեւատրեց Էնթընի սրկ. Խաչատուրեանին, Լիմոհ Լեւսերին, Զուրի Ուայթին, ինչպէս նաեւ տէր եւ տիկին՝ Սեդրակ եւ Անուշ Մաղդիսեաններուն:

Շնորհաբաշխութենէն հետոյ սրբազան հայրը հրաժեշտ տալով օրհնեց բոլորին, յաջողութիւններ մաղթեց իրենց ազգաշէն եւ եկեղեցւանուէր գործունէութեան մէջ:

Դիան Առաջնորդարանի

Արեւմտյան թեմի կրթության օջախները՝ Շաբաթօրյա դպրոցները

Արեւմտյան թեմն ունի տասնութ շաբաթօրյա դպրոց Լոս Անջելեսում եւ Կալիֆոռնիայի տարբեր քաղաքներում, որտեղ հայ երիտասարդ սերունդը սովորում է մեր լեզուն, կրօնը, պատմությունը, մշակույթը, երգն ու պարը, մեր ազգային արժեքները եւ հայրենասիրության առաքիլությունը՝ հարատւել պահելու հայ ինքնության կրակը: Այս ազգապահպան աշխատանքը նախաձեռնել են շաբաթօրյա դպրոցների գիտակրթական խորհուրդը եւ ուսուցչական կազմը՝ առաջնորդությամբ եւ հովանավորությամբ Արեւմտյան թեմի բարեխնամ առաջնորդ Յովնան արք. Տէրտէանի:

Թեմական շաբաթօրյա դպրոցներն առաջնորդվում են հայոց լեզվի, հայ գրականության, պատմության, կրոնի եւ մշակույթի համապարփակ ուսումնական ծրագրով, որը հիմնված է Կալիֆոռնիա նահանգի կողմից սահմանված լեզուների դասավանդման հիմնական չափանիշների վրա: Ծրագրի աղբյուրներն են տեղական եւ հայրենական տպագրության հայերենի ու հայ գրականության դասագրքերը, հայոց պատմության, հայ մշակույթի, հայրենագիտության եւ արդիական հարցերի շուրջ առկա նյութերը, գիտարկման միջոցները, հայկական կայքէջերը եւ զանազան լսա-տեսողական

միջոցները: Ծրագիրն իր նպատակների մեջ ընդգրկում է նաեւ աշակերտի լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու հարցերը՝ հաշվի առնելով տարիքային եւ հոգեբանական առանձնահատկությունները եւ սովորելու կարողությունները:

Շաբաթօրյա դպրոցների հիմնական նպատակն է մեր մանուկներին տալ ամբողջական հայեցի կրթություն, որպեսզի նրանք կարողանան

- հաղորդակցվել մայրենի լեզվով,
- հասկանալ եւ գնահատել մեր պատմական եւ մշակութային արժեքները,
- ունենալ ազգային ինքնագիտակցություն,
- լինել հպարտ իրենց լեզվով, հավատով, մշակույթով եւ հայրենիքով,
- ունենալ պատասխանատվության գիտակցություն հայ համայնքի, Հայ եկեղեցու, ապրած երկրի եւ հայրենիքի հանդեպ,
- ունենալ հանդուրժողականություն եւ հարգանք այլ ժողովուրդների եւ մշակույթների նկատմամբ:

Մանկավարժական մոր մոտեցումներին ծանոթացնելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին առաջնորդ Յովնան սրբազանի գլխավորությամբ դպրոց-

ների գիտակրթական խորհուրդը կազմակերպում է շաբաթօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ամենամյա աշխատանիստեր: Վերջին տասնմեկերորդ աշխատանիստը տեղի ունեցավ այս տարվա օգոստոսի տասնչորսին՝ մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության լեզվի պետական կոմիտեի տնօրեն, բանասիրական գիտ. դոկտ., պրոֆ. Դավիթ Գյուրջիմյանի եւ «Սփյուռք» գիտական կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտ. դոկտ., պրոֆ. Սուրեն Դանիելյանի:

Շնորհակալություն բոլոր դպրոցների տնօրեններին եւ ուսուցչական կազմին՝ իրենց կատարած հայակերտման մեծ աշխատանքի համար, բեմերից համայնքին ներկայացված գրական-երաժշտական հանդեսների համար, ուր ներկա են մեր հայրենիքը, Արցախի զինվոր, մեր աղոթքը, մեր բանաստեղծը, մեր երգն ու պարը: Շնորհակալություն մեր ծնողներին, որոնք սատարում են Հայ Դպրոցին՝ դարձնելով այն մի կտոր հող եւ շունչ մեր հայրենիքից:

Էլլի ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
Մանկավարժական գիտ. դոկտոր,
շաբաթօրյա դպրոցների գիտակրթական
խորհրդի ատենապետուհի


Պաշտօնական յայտարարություն

Այսու կու գանք յայտնել մերազն բարեպաշտ ժողովրդեան, որ ՊԵՏՐՈՍ ԲՅՆՅ. ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՆԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՈՒՄԵՆԻ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԷՆ ԶԷ ԵՒ ՈՐԵՆ ԶԵՆՈՒՄԻՆ ԶՆՈՒՄՈՒՄՆԵՐԸ ԶԵՆՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՏԱՏՈՒԹԵԱՆ ԿԵՆՈՒՄՆԵՐԸ:

Հետեւաբար, Արեւմտեան թեմը որեւէ կերպ պատասխանատու չէ հոգեւորականի անձի կամ գործունէութեան եւ ատոնցմէ բխող հետեւանքներու համար:

ՊԵՏՐՈՍ ԲՅՆՅ. ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԾԱՆԱԼԸ ԻՆԶԵՆԱԳՐԾՈՒՄՆԵՐԵԱՆ, ի մասնաւորի՝ Կլեմէյլ քաղաքի մէջ ԶԷՆՈՒՄՆԸ ՎԱՐՃԱԿԱԼԵՒԸ ԵՒ «Ս. ՍԱՐԳԻՍ ՀԱՅԳ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ» անունով կրօնական կազմակերպութիւն հիմնելու մասին պաշտօնապէս յայտնած ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ եկեղեցական բարձրագոյն իշխանութեանց:

ՌԻՍԱՍՏԱՆԻ ՆԱԾ ԳԵՂԹՈՋԱԽՆԵՐԻ ՊԼՏՐՈՒԹՅՈՒՆԸ



Նայերը հոծ սփյուռք ունեցող այն ժողովուրդներից են, որոնց պատմության եւ մշակույթի մի զգալի հատվածը կերտվել է հայրենի հողից ու երկրից դուրս՝ օտար աշխարհներում: Եվրոպայի եւ աշխարհի բազմաթիվ երկրներում տարբեր դարաշրջաններում, բազմազան համգամանքների ու գործոնների թելադրամբով առաջացել են հայկական գաղթօջախներ: Սակայն դրա զվիսվոր պատճառը հայ ժողովրդի պատմական անագորույն ճակատագիրն է: Հայրենիքում ստեղծված անբարենպաստ, տնտեսական, քաղաքական ու անմարդկային պայմանները հայությանը ստիպել են զանգվածաբար արտագաղթել եւ բախտ որոնել այլ երկրներում: Դարեր ի վեր հայ ժողովրդի հայրուր հազարավոր զավակներ հեռացել են հայրենիքից եւ ապաստան են գտել Ռուսաստանում, որը մոտ էր Հայաստանին, իսկ մշակութային ու դավանաբանական առումով բավական հոգեհարազատ էր:

Ռուսաստանի տարածքում եղած հայկական գաղթօջախների վերաբերյալ (ձեւավորումից մինչեւ մեր օրերը) հիմնարար աշխատություն է գրվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում. հեղինակներն են անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը եւ պատմագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի՝ հայ գաղթօջախների եւ Սփյուռքի պատմության բաժնի երիտասարդ գիտաշխատող Հովիկ Ալեքսանյանը: «Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմությունը» հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի կողմից (գրախոս՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյան), տպագրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու ծավալուն բաժիններից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկից, անվանացանկից: Առաջին բաժնում («Ռուսաստանի հայկական գաղթօջախները սկզբնավորումից մինչեւ 1917 թ.: Գաղթօջախների տնտեսական, հասարակական, հոգեւորմշակութային կյանքը») նախ տեսականորեն հիմնավորվում է այն հայեցակետը, որ Ռուսաստանի տարածքում հայկական գաղթօջախների առաջացումը կապված է հայ-ռուսական հարաբերությունների սերտացման հետ: Ուշ միջնադարի դժոխական ժամանակաշրջանում հայ քաղաքական միտքը տեղագիր էլք էր որոնում Հայաստանը թուրքական եւ պարսկական տիրապետություններից ազատագրելու նպատակով՝ հանգեցնել այն եզրակացության, որ դա հնարավոր է իրագործել միայն Ռուսաստանի օգնությամբ: Միաժամանակ, ռուսական հզորագույն կայսրությունն իր հերթին ձգտում էր ընդարձակել հարավային սահմանները եւ այդ նպատակով փորձում էր բարոյաքաղաքական կամուրջներ ձեւավորել՝ հենվելով հարավում ապրող դավանակից ժողովուրդների՝ հայերի եւ վրացիների վրա: Հստակ մատնանշվում է, որ ռուսական կայսրության այդ քաղաքականությունը համընկնում էր Այսրկովկասի ժողովուրդների եւ հատկապես հայության ազատագրական ակնկալիքների ու հույսերի հետ:



կացությունը, եկեղեցական, ազգային եւ մշակութային կյանքը:

Այնուհետեւ աշխատության էջերում հաջորդաբար տրված են Աստրախանի, Հյուսիսային Կովկասի, Նոր Նախիջևանի, Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղթօջախների ստեղծման ու զարգացման գործընթացները՝ փոխ առ փոխ, դետալ առ դետալ, մեծ հիմնախնդիրներից մինչեւ մանրուքները: Հնարավորինս գիտական փաստաառաջացմամբ ներկայացված են վերոնշյալ գաղութների հայության ժողովրդագրական տեղաշարժերն ու ուղիները, դարերի ընթացքում ստեղծված նյութական ու հոգեւոր արժեքները, կրթական համակարգը, մշակութային օջախները, պարբերական մամուլն ու գրական կյանքը, բնակչության առօրյա զբաղմունքների եկամտաբերությունն ու առանձնահատկությունները: ➔ էջ 5


ՄԱՐԿ ԿՈՐԼԵՐ

ԽԱՉՅԱԼ ԶԱՐԱԳՈՐԾԸ

Նրա խաչը գտնվում էր Հիսուսի խաչի կողքին: Շնորհիվ դիպավ նրան, քանզի նա այնքան մոտ էր իր Փրկչին, որ ամեն ինչ տեսավ, ամեն ինչ լսեց ու վերջապես հասկացավ: Բայց ինչպե՞ս նա հայտնվեց այդ իրավիճակում. խմբակային մահապատժի կիրառությամբ, որը հազվադեպ բան էր հռոմեացիների համար: Նման խմբակային մահապատժերի մեջ կային առավելություններ. տնտեսվում էր անձնակազմը, ավելանում էր զանգվածների վրա ազդեցությունը: Սրանք էլ այդ մեթոդը դարձնում էին արդյունավետ: Հրեա պատմաբան Հովսեփոս Փլավիոսը հաղորդում է, թե ինչպես էրուսաղեմի շրջապատման ժամանակ կայսր Տիտոսը քաղաքը բոլորել էր խաչերով. օրական խաչում էին մինչեւ հինգ հարյուր մարդու... Ուստի ոչ մի զարմանալի բան չկար, որ երկու չարագործները խաչվելու էին Հիսուսի հետ:

Սակայն ամեն ինչ այդքան հեշտ չէ: Չորրորդ Ավետարանը մեզ պատմում է, թե ինչպես զինվորները կոտորեցին երկու ավագանիների ոտքերը: Արդարեւ, զատկական շաբաթը պիտի սկսվեր առաջին աստղի բարձրանալու հետ, ու փայտից կախված դատապարտյալի ներկայությունը պիտի ստվեր գցեր ողջ երկրի վրա: Ուստի հրեաները գալիս են խնդրելու երեք դատապարտյալների հանել՝ երաշխավորելով, որ նրանք ոչ մի դեպքում չեն կարողանա դուրս պրծնել. կոտորում են այդ դժբախտների ոտքերը ոչ թե նրանց մահը արագացնելու, այլ որեւէ փախուստ նրանց կողմից անհնարին դարձնելու համար՝ նրանց մարմինները խաչից իջեցնելուց հետո (Հովհ. 19. 31): Սակայն շատ արագ մահը Հիսուսին ազատեց այդ հավելյալ կտտանքից. քանի որ մարդը կարող էր մի քանի օր ապրել խաչից կախված, մինչեւ որ փտախտը կամ արյան շրջանառության խանգարումը վերջ դնեին նրա տառապանքներին:

Այսպիսով՝ Պիղատոսն առավոտյան ուղարկում է (ըստ չորրորդ Ավետարանի՝ անգամ օրվա երկրորդ կեսին) խաչելու նրանց, ում մասին ինքը գիտե, որ մի քանի



Բրամանտինո. «Խաչելություն»

ժամ հետո իջեցնելու են խաչից: Իսկապես, Պիղատոսը չէր կարող չհիմանալ հրեական օրենքները: Նույն առավոտյան Հիսուսին մեղադրողները, բնավ չցանկանալով իրենց ձեռքերը կեղտոտել Ջատկի մախապատրաստության օրը, հրաժարվել էին ոտք դնել կուսակալի կացարանը (Հովհ. 18. 28): Պիղատոսն ստիպված էր դուրս գալ նրանց ընդառաջ: Եթե նա արեց դա, որեւէ գիտեր իր հպատակների ծեսերի մասին:

Ինչ Հիսուսին է վերաբերում, գործը պարզ էր: Պիղատոսին ստիպեցին Կայափայի կողմակիցները: Նա տեղի տվեց նրանց: Հովհ. 19. 16-ն այդ մասին ասում է այսպես. «Այդ ժամանակ նրան հանձնեց նրանց ձեռքը՝ խաչելու»: Հանձնեց իմ: Մինչ այդ հիշատակվում են միայն բարձրաստիճան քահանաները: Բայց մահապատիժը կատարվեց հռոմեական բանակի կողմից: Ուրեմն ավետարանիչն ուզում է ասել՝ Հիսուսին հանձնեց մահապատիժն իրականացնող զինվորներին:

Հիսուսի համար Պիղատոսը ոչ օր, ոչ ժամ չէր կարող ընտրել: Պահն ամրագրված էր քաղաքական անհրաժեշտությամբ: Իսկ երկու չարագործների համար: Ոչ մի պատճառ չէր ստիպում Պիղատոսին նրանց խաչափայտից կախել միաժամանակ: Նրանց դեպքը ոչ մի ընդհանուր բան չուներ Հիսուսի դեպքի հետ: Նրանք բանտարկված էին եւ սպասում էին իրենց ժամին: Ինչո՞ւ արագացնել այդ ժամը:

Նրանց որակելու համար Մարկոսն ու Մատթեոսն օգտագործում են «ավազակ» բառը: Որտեղից էլ այն ենթադրությունը, թե Պիղատոսը Հիսուսին խաչել էր տվել այդ երկու հանցագործների հետ, որպեսզի Նրան ստորագներ: Այստեղ ատելության զգացում պիտի լիներ, ատելություն, որը ծնվել էր Հիսուսին անպատվելու, Նրան նվաստացնելու, մինչեւ վերջ ստորացնելու համար...

Բայց Պիղատոսը Հիսուսին չէր ատում: Նա Նրան դատապարտեց չուզեցալով, քանզի գիտեր, որ այդ մարդը, որ իրեն հետաքրքրում էր իր անվրդովությամբ, անմեղ էր: ➔ էջ 5, 7

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ թիվ 12—19

Լուսավորում են լուծում պահանջող կյանքի հարցականները. ինչո՞ւ իրենց սպանեցին գյուղական երկու անմեղ երիտասարդները, ինչո՞ւ են նրանց այդ արարքը քննելիս անտեսում հոգեբանական բնույթի շատ նրբին գործոնները եւ կանոնադրերի օրենքներով ու կարգախոսներով փորձում մեկնաբանել կատարվածը: Եղբայրը մեռավ, եղբայրն իրեն հաշվապահ էր համարում, բայց հանկարծ նրա հաշվապահական թղթերի մեջ Լեւոնը բանաստեղծություններ է հայտնաբերում եւ կյանքի վերաբերյալ արված դատողություններ ու գրառումներ, ինչո՞ւ էր եղբայրը թաքցնում այդ ամենը: Հարցականները շատ են: Պետրոսյանն ստեղծում է այս հարցումներին պատասխան որոնող հերոսի մի նկարագիր, որը ցանկանում է թափանցել իր կյանքը կազմող հարաբերությունների ու վիճակների մեջ եւ իմաստավորել, արժեքավորել այդ ամենը: Հերոսի ապրած վիճակներն ստեղծում են հոգեբանական հանգույցների մի համակցություն, որի բաղկացուցիչ տարրերն են ներամոտիվացիայությունը, մեղքությունը, կյանքի ներքին ազդակների մասին ոչ բարձրաձայն, այլ ինքն իր մեջ խոսելու, լռությունն իմաստավորելու, ներքին մենախոսության անցնելու բնավորության գծերը, մասնակի դժգոհությունը շրջապատից եւ օտարումը՝ կյանքի մակերեսը, փրփուրը կազմող մարդկանցից ու հարաբերություններից:

Հերոսի այդ նկարագրի համար կարելու է նաեւ կյանքի իմաստի որոնումը, ինչի համար հեղինակը նրան մղում է դեպի ներաշխարհ՝ ինքնավերլուծության, ինքնագնահատության: Այս ներսուզումը նպատակ ունի բացահայտելու կյանքի արժեքը, ապ-


րած օրերի նշանակությունը, գոյության ժամանակի բաժանումն ապրած տարիների եւ չապրած տարիների: Այս տեսանկյունից հերոսի նկարագիրն ստանում է մասնակի գոյափոխության կամ հիմնավորում, ինչը միանգամայն բնական ու հատկանշական կարող է թվալ կյանքի զգացողության եւ մտածողության այն ձեւի համար, որ ունի վեպի հերոսը:

Ինչպես այս, այնպես էլ այլ գործերում Պետրոսյանի հերոսների կյանքը չի սկսվում եւ չի վերջանում մի քանի էջի վրա: Նա ընտրում է կյանքի մի պահ, որ սկսվել է վաղուց եւ դեռ պետք է շարունակվի: Հեղինակը չի ջանում հերոսների կյանքի ընթացքը կապերով ու հարաբերություններով ամբողջացնել: Այդ կյանքն անընդմեջ շարժման մեջ է եւ դեռ ճանապարհ ունի անցնելու: Այս ավարտը բնորոշ է «Ապրած եւ չապրած տարիներ» վեպին, ինչի հետեւանքով եւ տեսանկյունից գծագրվում է հերոսի արտավիպական կյանքի շարունակությունը:

Իր պատմվածքներում ու նորավեպերում սովորական թվացող դեպքերի ու պահերի մեջ Պետրոսյանը փորձում է գտնել կյանքի թաքնված հոգեբանական դրամայի որոշ պատկերներ: Մի կողմից ներկայացվում են հերոսներ, ովքեր կողոպտում են իրենց անցյալը եւ փորձում իմաստ գտնել ապրած տարիների մեջ («Եթե երկինքը կապույտ լիներ»), իսկ մյուս կողմից՝ պատկերվում հերոսներ, ովքեր տքնում են իմաստավորել իրենց ներկան, որպեսզի հետագայում «թափանցել» անցյալ ունենան: «Անցած տարվա ծաղիկները» պատմվածքն այդ ներկայի որոնումն է: Մարդը ձանձրացել է իր ամենօրյա պարտականություններից. կյանքի կայունացումը նրա համար համարժեք է մահվան, նրան միշտ պետք են անորոշ ու նորը: Իսկ կյանքն ունի իր

շրջագիծը, եւ ամենօրյա կարուսելը նույն այդ հերոսին վերստին ստիպում է քրքրել անցյալը: «Մի երկար գիշեր եւ մի կարճ առավոտ». սա դարձյալ ապրած կյանքն է, որ տարիների մեջ հեռացել եւ հիմա կարոտի կանչ է դառնում հերոսի հոգու մեջ. հանդիպում կամ վերհիշում եւ մեկին, որի մեջ կա քո կյանքի մի մասը, որի մեջ դու մնացել ես կյանքի որեւէ տարիքում եւ հիմա կորցրած ընկերուհուդ մեջ ժամանակային անցած մի հատվածի վերհիշումով հանդիպելով ինքդ թեզ, վերագտնելով քո կենսագրության մի մասը՝ տխրում ես, փոխափայլում ու դառնում նաեւ ինչ-որ չափով զգացմունքային: Ու ձեւավորվում է հաջորդ պատմվածքը՝ «Ինչու եմ շուտ մեռնում ծաղիկները»՝ նախորդ պատմվածքի հոգեբանական վիճակը շարունակելով մոր եւ նախորդին լրացնող ձեւով: Ամեն մարդ հոգու մեջ ունի իր աշխարհը. ո՛չ այն, որ ապրում է բոլորի աչքի առաջ, այլ մեկ ուրիշը, որ միայն իրենց է, եւ դրա համար ինքն իրեն պատասխանատու է ամբողջ էությամբ: Ինչու եմ շուտ մեռնում ծաղիկները՝ պատասխանը պետք է որոնել ունեցած կորուստների մեջ, որովհետեւ կորուստներն են, որ հիշատակ են դառնում եւ ապրած օրը, անցկացրած կյանքը դարձնում հոգեբանական արժեք, գոյության հիմք:

Ներկա օրվա համար կորուսյալ մի աշխարհ է անցյալի կյանքը՝ մանկության



հիշողություններով, հարազատների ու ծանոթների աստիճանաբար խամրող դիմաստվերներով, հողին հանձնած թանկագին աշխատանքով, անցած օրերի գոյությունը հաստատող դեպքերով ու պատմություններով: Այդ կորուսյալ աշխարհի կանչը թանկ է մարդու համար: Այդ կանչի արձագանքն է «Նամակներ մանկության կայարաններից» խորագրով պատմվածքների շարքը («Գարուն», 1976, թիվ 1): Պատմվածաշարի գլխավոր հերոսը, եթե կարելի է այսպես ասել, հեղինակի մանկությունն է, որ իմաստավորվում է հասուն տարիքի հոգեբանությամբ եւ այդ դիրքերից էլ վերակոչում անցյալի պատկերները: Կորուստի ցավով են հիշվում եւ անցյալի դեպքերն ու դեմքերը, եւ սերերն ու երազանքները, եւ բույրերն ու երգերը: Հոգեբանական այս վիճակի հիմնական բաղադրիչներ են դառնում զգացմունքայնությունն ու քնարականությունը, կարոտն ու հուշը, բարությունն ու մեղմությունը, թախիծն ու կյանքի անցողիկության գիտակցումը, նաեւ արցունքն ու անցյալի հիշատակներով լցված լռությունը: ➔ էջ 6

Հ. Թումանյանի հասարակական գործունեության վերջին շրջափուլը եւ Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ) 1921—1923 թթ.

Սկիզբը՝ թիվ 19

Հ. Թումանյանին առաջարկում են կոմիտեի նախագահի պաշտոնը: Նա խնդրում է, գրականությամբ զբաղվելու համար, իրեն ազատ թողնել, սակայն շրջելով Երեւանի փողոցներում եւ տեսնելով ծանր ու դաժան պատկերներ՝ այսպես է ասում. «Երբ մի ժողովուրդ սովամահ է լինում փողոցներում, պետք է թողնել ամեն ինչ, մոռանալ ամեն բան եւ գնալ նրան փրկելու»: Այդպես Թումանյանը դարձավ ՀՕԿ-ի նախագահ: Այս գործը վերջինն էր, որ Թումանյանը հասցրեց անել հայրենիքի համար: Այսպիսով՝ ՀՕԿ-ի գլխավոր վարչության առաջին պատվավոր նախագահը հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանն էր, որը, սակայն, բնակվելով Թիֆլիսում՝ հնարավորություն չուներ ստանձնելու ՀՕԿ-ի ամիջական ղեկավարությունը: Դրա համար էլ ՀՕԿ-ի ամիջական ղեկավարությունը վստահվում է ՅՍԽՀ հողժողկոմ Արամայիս Երզնկյանին: ՀՕԿ-ի հիմնադիր ժողովում Ա. Երզնկյանը միաձայն ընտրվում է ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ:

Թումանյանի ջանքերով 1921 թ. հոկտեմբերին Թիֆլիսում բացվեց ՀՕԿ-ի մասնաճյուղ, եւ ամսաի լոռեցին անձնուրաց մփրոնով նպաստեց ՀՕԿ-ի կայացմանը, Հայաստանի ապաքինմանն ու բարգավաճմանը: 1922 թ. ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղեր են ստեղծվում Մոսկվայում, Բաքվում, Թեհրանում, ապա նաեւ՝ Բաթումում, Կիևում, Խարկովում, Օդեսայում, Ցարիցինում (այժմ՝ Վոլգոգրադ, ՌԴ), Հյուսիսային Կովկասի ու Միջին Ասիայի, ԽՍՀՄ գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում, 1924—1925 թթ.՝ Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Լատինա-



կան Ամերիկայի մի շարք քաղաքներում, Մերձավոր Արեւելքում, Իրանում (Թավրիզ), Եգիպտոսում, Ալժիրում եւ այլուր: ՀՕԿ-ի եկամուտները գոյանում էին անդամավճարներից, հրատարակումներից, մփրատվություններից, կտակներից եւ այլ աղբյուրներից: Հայրենիքի շուրջը սփյուռքահայությանը համախմբելու գործում կարելու դեր են կատարել ՀՕԿ-ի պարբերականները եւ այլ հրատարակությունները:

Հսկայական էր Հ. Թումանյանի ներդրումը ՀՕԿ-ի հեղինակության բարձրացմանն ու հայության՝ հատկապես սփյուռքահայության մեջ ՀՕԿ-ի նկատմամբ մեծ վստահություն ապահովելու գործում: Թեեւ հանձարեղ բանաստեղծ ու մեծ մարդասեր Թումանյանը, որն արդեն վատառողջ էր ու հիմնականում բնակվում էր Թիֆլիսում, հնարավորություն չուներ շատ ժամանակ տրամադրելու եւ ամիջականորեն ղեկավարելու ՀՕԿ-ի աշխատանքները, այնուա-

մենայնիվ, իր՝ Հ. Թումանյանի նախագահության տարիներին ՀՕԿ-ն իր առջեւ դրված նպատակների իրականացման շրջանակներում օգնում է հորհրդային Հայաստանի սովյալ բնակչությանը, օժանդակում շինարարությանը, կապեր հաստատում ու սերտացնում հարաբերություններն աշխարհով մեկ սփռված հայ տարագիրների ու հայկական համայնքների հետ, նրանց համախմբում հայրենիքի շուրջը: Ստեղծումից ամիջապես հետո ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն անհապաղ ձեռնամուխ եղավ սփյուռքահայ համայնքների հետ կապեր հաստատելու գործին: Սփյուռքի ու հորհրդային Միության հանրապետությունների հայ համայնքներին ուղարկած շրջաբերականներով ՀՕԿ-ը կոչ էր անում շուտափույթ օգնել մայր հայրենիքին: Այդ նպատակով 1921 թ. աշնանը ՀՕԿ-ը կազմակերպում է Հ. Թումանյանի եւ Ե. Թադևոսյանի գործուղումը Կ. Պոլիս: 1921 թ. հոկտեմբերին

Հ. Թումանյանը մամակով դիմում է արտասահմանում գտնվող Ավ. Իսահակյանին ու Ա. Չոպանյանին՝ նրանց հորդորելով մասնակցել Եվրոպայում ՀՕԿ-ի մասնաճյուղեր ստեղծելուն աշխատանքներին: Հ. Թումանյանը գործում էր մեծ ոգեւորությամբ, լավատեսորեն էր տրամադրված ու վստահ էր ՀՕԿ-ի նպատակների իրագործմանն ու արդյունավետ գործունեությանը: Դա երեւում է հատկապես Թումանյանի հետեւյալ տողերից. «Նշանակալից երեւոյթ է, որ, իրարից անկախ ու անտեղյակ, մեզ մարմիններ (իմա ՀՕԿ-ի մասնաճյուղեր.— Ա. Մ.) են առաջ գալիս եւ մեր գաղութներում: Ես մշանակում է, թե կենդանի է հայությունը»:

Կենդանի է եւ ուժեղ: Երեւանից սկսած մինչեւ հեռավոր գաղութները շարժվում է մա դեպի հայրենիք:

Ինչքան էլ խոչ ու խոթեր, ինչքան էլ դժվարություններ ու թշվառություններ հանդիպեն ճանապարհին, մա հասնելու է իր նպատակին:

Հայաստանի ազատ հողի վրա մա շինելու է իր ազատ ու առատ տունը, Հայկական բարձրավանդակի վրա զարգացնելու է իր ազգային հանճարը եւ իր խոսքն ասելու է աշխարհիքին»:

Հ. Թումանյանի նախագահության տարիներին զգալի էր ՀՕԿ-ի օգնությունը գիտական ու կրթաշակութային օջախներին՝ Ալ. Մյասնիկյանի անվան համրային գրադարանին (այժմ՝ Ազգային գրադարան), թատրոններին, բուհերին, թանգարաններին: Պայմանագրեր էին կնքվում գիտության, գրականության եւ արվեստի գործիչների հետ, որոնք իրենց ստեղծագործություններում պետք է ներկայացնեին հորհրդային Հայաստանի ներքաղաքական կյանքի տարբեր ոլորտները՝ նպատակ ունենալով աշխարհին ծանոթացնել վերականգնվող Հայաստանի նվաճումներին: ➔ էջ 8

ՌԻՍԿԱՍՏՆԵՒԻ ՆԱՅ ԳԱՂԹՈՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ


← ٤٩ 3

Կարելուր ու հետաքրքիր տեղեկություններ են հաղորդվում Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների ձեւավորման ու հետագա բարգավաճման վերաբերյալ: Նշվում է, որ Մոսկվայում հայերի գտնվելու վերաբերյալ առաջին հիշատակումները վերաբերում են XIV դ. երկրորդ կեսին (էջ 150): Մոնղոլ-թաթարական լծի թոթափումից հետո հայերի հոսքը դեպի Մոսկվա ավելի աշխույժ է դառնում: Այն առավել ուժեղանում է XVII դ. առաջին կեսից, երբ ռուսական կայսրության մայրաքաղաք էին գալիս ոչ միայն Հայաստանից, այլեւ Անդրկովկասի հայաբնակ բազմաթիվ վայրերից, Դրիմից, Աստրախանից եւ այլ տեղերից:

Հատկանշական է այն դիտարկումը, որ, ի տարբերություն Ռուսաստանի տարածքում ձեւավորված մյուս հայկական գաղութների, որոնց ինքնավարությունը մարմնավորում էին ռաթիաուզները կամ մագիստրանտները, Մոսկվայի եւ Պետերբուրգի պարագայում այդ դերը կատարում էր հայերին միավորող ազգային ու համազգային միակ կազմակերպությունը՝ Հայ Առաքելական Եկեղեցին:

Աշխատության երկրորդ բաժնում («Ռուսաստանի հայկական համայնքները խորհրդային տարիներին: ՌԴ համայնքն արդի փուլում») ներկայացված է իրավիճակը հայկական գաղթօջախներում ցարական իշխանության տապալումից հետո՝ խորհրդային վարչակարգի ավելի քան 70 տարվա ընթացքում, ինչպես նաև արդի շրջանում:

Ճշմարտացի մոտեցում է ցուցաբերված պատմական իրադարձությունների նկատմամբ, դրանց ազդեցությունը հայկական զաղթօջախների վրա՝ առանց դույզն-հիշչափազանցելու կամ նվազեցնելու: Այժ, Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Ռուսաստանի հայ համայնքների հայրություն թվաբանակի շեշտակի անեց, իսկ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը այդ երկրի հայաբնակ շրջաններում ազգային կյանքի զարգացման հզոր խթան դարձավ: Սակայն դա երկար չտևեց: Իշխանության գլուխ անցած բոլշևիկները ազգային հարցի հանդեպ շուտով որդեգրեցին բոլորովին նոր մոտեցում: Արդեն 1918 թ. հունիսի 12-ին ՌԽՖՍՄ ժողովուրդները դեկրետ է ընդունում «Հայկական ազգային խորհուրդները, պաշտպանության



խորհուրդները, ռազմահեղափոխական կոմիտեները եւ մյուս բուրժուական կազմակերպությունները լուծարելու մասին»։ Վերոնշյալ կառույցների լուծարումից հետո նրանց գույքն ու կապիտալը, զբաղեցրած շինությունները դրվում էին Հայկական գործերի կոմիսարիատի ենթակայության ներքո։ Իսկ այն վայրերում, որտեղ Հայկական գործերի կոմիսարիատը բաժանմունքներ չուներ, գույքը հանձնվում էր տեղական խորհուրդներին։ Չնայած ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակին, կոմիսարիատը (մախագահ՝ Վ. Ավանեսով, տեղակալ՝ Վ. Տերյան) Ռուսաստանի հայերի ազգային կյանքի ղեկավարությունը վերցրեց իր ձեռքը եւ կարողացավ քարոզչական ու լուսավորական զգալի աշխատանք կատարել մշակութային եւ կրթական ոլորտներում, ինչպես նաեւ օգնել մեծաքիվ հայ գաղթականներին ու կարիքավորներին։

Աշխատության շեքերում առաջին անգամ ներկայացվում են 1920—1930-ական թթ. Խորհրդային Ռուսաստանում ձեւավորված հայկական ազգային գյուղխորհուրդներն ու շրջանները, այնտեղ առկա կթթանշա-ուկութային կյանքը, դպրոցը, գրական ան-ցուղարթը: Քչերին է հայտնի, որ 1925 թ.

մարտի 10-ին Հյուսիսկովկասյան երկրամասի Մայկոպի օկրուգի կազմում հիմնվել է Հայկական ազգային շրջանը, որը կազմավորվել է գլխավորապես հայերով բնակեցված գյուղական խորհուրդներին, իսկ շրջակենտրոնը ելիսավետայուսկոյե (Շահումյան) գյուղն էր։ Հայկական ազգային շրջանը, փաստորեն, զբաղեցնում էր Մայկոպի օկրուգի հարավարեւմտյան մասը, սահմանակից էր Կուբանի եւ Չերնոմորիեի օկրուգներին՝ կազմելով 1286 քմ. կմ տարածք (էջ 225)։

1927–1928 թթ. այնտեղ բացված հայկական 23 դպրոցում սովորում էր 1120 աշակերտ: Հաջողությամբ գործում էր հայկական թատրոնը, հրատարակվում էր «Մուրճ-մանգաղ» պարբերականը, տպագրվում էր հայ գրականություն:

Հետաքրքիր է նշել, որ 1931 թվականից սկսվել էին շրջանային աշխատակազմի եւ գյուղական կազմակերպությունների հայացումը եւ անցումը հայերեն գործակալությանը, սակայն, այնուամենայնիվ, դրանք արմատավորել չի հաջողվում: Այս առումով մեջ-

բերված են բազմաթիվ փաստեր ու թվեր՝ տարբեր ատյաններում ընդունված որոշումներից ու արձանագրություններից:

ՌԽՖՍՂ-ում երկրորդ հայկական ազգային շրջանը կազմավորվել է Դոնում՝ 1926 թ. (Սյամսիկյանի ազգային շրջան), որի կենսագործունեությունը նույնպես բավարարչափով լուսաբանվել է աշխատության մեջ:

Ուշագորավ, փաստառճատ տվյալներ է պարունակում «Հայության թվաքանակն ու տեղաբաշխումը ՌԽՖՍՀ-ում 1920—1989 թթ.» գլուխը, որտեղ գետեղված բազմաթիվ աղբյուրները տվյալներ են տալիս Ռուսաստանի տարածքում՝ ըստ շրջանների հայության թվաքանակի, տեղաբաշխվածության, սեռի, սոցիալական վիճակի, զբաղմունքների, գրագիտության աստիճանի վերաբերյալ: Հետաքրքիր նյութեր է պարունակում «Հայության հոգեւոր-եկեղեցական կյանքը ՌԽՖՍՀ-ում» գլուխը. դրանք իրական պատկերացում են տալիս խորհրդային իշխանության հաստատունից հետո Ռուսաստանի հայկական թեմերում ստեղծված անմխիթար ու ծանր իրավիճակի մասին: Այս մասին հետեյալն է փաստարկվում. «1930-ական թթ. հայ հոգեւորականությունը բռնաճնշվեց, որի

արդյունքում, փաստացիորեն, Հայ Առաքելական Եկեղեցու կառույցը ՌԽՖՍՀ տարածքում, մասնավորապես Հյուսիսային Կովկասում վերացվեց: Փակվեցին, ապա տարբեր տարիների վերացվեցին Արմավիրի, Աստրախանի, Նոր Նախիջևանի, Կրասնոդարի, Մավրկոպոլի, Սուրբ Խաչի (Քուլյոյնովսկի), Մյաուխդորսկի, Գրոզնու, Ղզլարի, Մոզդոկի եւ այլ բնակավայրերի հայկական եկեղեցիները» (էջ 330):

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ 1930-ական թթ. իսկական արշավ է սկսվել Ռուսաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիների ու պաշտամունքային այլ օջախների դեմ. նրանց ունեցվածքը բռնագրավել են, հոգեւորական դասը ենթարկվել է հայաձանձուրների:

Աշխատության վերջին գլուխը («ՌԴ համայնքն արդի փուլում: Թվաքանակի ու տեղաբաշխման ընդլայնում, ինքնակազմակերպական խնդիրներ») ներկայացնում է վերջին շրջանում Ռուսաստանի հայ (եւ ոչ միայն) համայնքներում ընթացող ժողովրդագրական գործընթացների թարմ պատկերը, ռուսաստանաբնակ հայության քաղաքական, սոցիալական, մշակութային հիմնախնդիրները: Աշխատության հեղինակները փաստարկում են, որ հետխորհրդային տարիներին ՌԴ հայության թվաքանակի շարունակական աճն այդ երկրի հայկական համայնքը դարձրել է խոշորագույնն աշխարհում, որի սոցիալտնտեսական, քաղաքական եւ մշակութային ներուժը լիովին բազահայտված չէ:

Ամփոփելով մշեմը, որ Վ. Բարխուդարյանի եւ Յ. Ալեքսանյանի հեղինակած սույն աշխատությունը հայ պատմագիտության մեծ առաջին ամբողջական երկն է, որը տալիս է Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմության հնարավորինս սպառելի պատկերը՝ կազմավորման ժամանակներից մինչեւ մեր օրերը: Գիրքը շարադրված է գիտական բարեխղճությամբ, բարձր պատասխանատվությամբ, անկողմնակալությամբ: Օգտագործված են բազմաթիվ սկզբնաղբյուրներ, վավերագրեր, մենագրություններ, հոդվածներ, պարբերականներ, կայքէջեր (հայերեն եւ օտար լեզուներով), որոնք առավել եւս բարձրացնում եւ շահեկան են դարձնում գրախոսվող աշխատության գիտական վարկանիշը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՄԱՐԿ ԿՈՅԼԵՐ

← ٤٩ 3

Եթե Պիղատոսն զգուն էր չարություն, ապա միայն հրեաների դեմ. նա դա ցույց է տալիս երեք լեզուներով գրված տախտակի առիթով, որ հավանաբար տարել էին թափուրի առջեկից, հետո ամրացրել խաչի վրեժու՝ «Չրեաների թագավոր» մականորությամբ: Մեծամեծները բողոքում են. ոչ թե Օծյալ, այլ օծյալության կեղծ-հավակնորդ, ահա թե ինչ պիտի գրված լիներ տախտակի վրա: Պիղատոսը հրաժարվում է կատարել նրանց կամքը: «Ինչ գրեցի, գրեցի», – ասում է նա: Այլ կերպ ասած՝ դրանով էս վրեժ են լուծում նրանցից, ում առաջ ստիպված եղա տեղի տալ: Ես երջանակի են, որ իմ քայլը նրանց կատարեցնում է (Յովհ. 19. 22):

Այսպիսով՝ տախտակը հրեաներին վիրավորանք հասցնելու համար է: Նույնը չի՞ վերաբերում արդյոք երկու «ավագակներին»: Պիղատոսը հրամայել էր նրանց դուրս բերել բանտից ժամանակից շուտ ու կախել Հիսուսի կողքին ոչ թե նվաստացնելու համար Նրան, ումով ինքը հիանում էր, այլ հրեաներին վիրավորելու համար. ուստի այդ երկու չարագործների ներկայությունը Պիղատոսի նախաձեռնությունն էր, եւ բացառաբար է է իր՝ փոխվերժի հասնելու զանկությանը:

Բայց ինչպե՞ս այդ ներկայությունը կարող է վիրավորական լինել: Կամ ավելի ճիշտ՝ ի՞նչ տեսակի մարդ պիտի լինեին այդ երկուսը, որ հրեաների արժանապատվությունը

վիրավորվեր: Յրեաները թշնամի են Հիսուսին: Նրանց վիրավորանք հասցնելու համար պետք է, ուրեմն, Նրան շրջապատել երկու դատապարտյալներով, որոնց հանդիպ զանգվածը համակարանք է տաժան է: ողբում նրանց մահապատիժը. նրանք սիրված մարդիկ են, որոնցով հիանում են: Այդ դեպքում ամբոխն այլևս չի կարողանալու ուրախանալ Հիսուսի մահով: Նրա անառողջ հաճույքը փչանում է. իրենադելով նա ստիպված կլինի լաց լինել. իր ցնծությանը մա պետք է խառնի արգունքներ...


Ցնցող է տեսնել, գոնե սկզբում, երկու չարագործների վերաբերմունքը, որ նման է ամբոխի վերաբերմունքին. ամբոխը ծաղրում է. թող կեղծ փրկիչը հիմա փրկի ինքն իրեն: Քրիստոսի աջ ու ձախ կողմերում դատապարտյալները (Մատթեոսն ու Մարկոսը ծաղրամքները վերագրում են երկուսին էլ) հավասարապես ծանակում են այդ փրկչին, որն ընդունակ չէ ինքն իրեն ազատել նման իրավիճակից ու նաեւ իրենց փրկել: Չանգ-վածի հակազդեցությունը նույնն է, ինչ չարագործներին: Ուրեմն՝ մի սնամոթյուն կա այդ երկու կողմերի միջեւ. նրանք նույն կարծիքին են: Զենց դա էլ ցանկացել է Պիղատոսը (Մատթ. 27. 38–44, Մարկ. 15. 27–32):

Բայց դժվար է հասկանալ, թե որքան հեշտ է իրականում իրականացվում է այդ քաղաքականությունը, և որքան հեշտ է իրականացվում է այդ քաղաքականությունը:

րության հերոսները, որոնք ընդհատակյա պայքարում կռվում են ազգային ազատագրության համար: Այդ շարժումը գոյություն ուներ: Այն ուներ անուն, առաջնորդներ, մարտավարություն: Այդ մարդիկ կռվում էին զեյլուտներ (zelote — անխանձհույզ): Երկու խաչակյա չարագործները, որ Տիրոջ խաչի երկու կողմերում էին, նրանցից էին:

Այդ մտահանգմանը կարելի է հակադրել մի փաստարկ: Պիղատոսի ուզածը Կայափային (որը դավադրության ոգեշնչողն էր) ու նրա ազնվականական շրջապատին հարված հասցնելն էր: Ազգի այդ երեւելիները ցանկացանում էին Յոռնի աջքին լավ երեւալ ու պահպանել իրենց արտոնությունները: Նրանք դատապարտում էին ամեն մի քայլքայիչ շարժում ու իրենց քաղաքականությանը հակադրվում էին զելոտներին: Մեծնող զելոտների ներկայությունը Յիսուսի կողքին միայն բավականություն պիտի պատճառեր նրանց...

Բայց Պիղատոսին հայտնի է, որ իսկական դավադիրները մնալու են ստվերում: Խաչի ստորոտին Կայափայի մասին չեն խոսում: Հրեա ազգի առաջնորդների դեմ զայրացած լինելով՝ Պիղատոսը գրգռված է նաև ամբոխի դեմ: Միթե այդ ամբոխը չէր, որ Բարաբբային նախընտրեց Հիսուսից: Ուստի Պիղատոսը մոլեգնում է ամբոխի դեմ՝ Հիսուսին խաչելով զելոտների հետ միասին: ➡ էջ 7



Անդրեյ Միրոնով. «Խելամիտ ավազակը»

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

← էջ 4

Պետրոսյանի գրական որոնումներին եւ նախասիրություններին բնորոշ ուշագրավ դրսևորումներից է «Հայկական էսքիզներ» խոհագրությունը: Պետրոսյանի գրչին պատկանում են բազմաթիվ հրապարակագրական եւ ուղեգրական նյութեր: Ստեղծագործական նախասիրությունների այդ հրապարակագրական, ուղեգրական, հիմքում՝ փաստագրական կողմնորոշումը, միավորվելով գեղարվեստական արձակի՝ նրա դավանած սկզբունքներին, ստեղծում է նյութի, հերոսի, պատումի ձեւ, ինչն իր դրվագայնությամբ, խճանկարայնությամբ կամ ուրվագծային բնույթով համդերձ, թողնում է սկիզբ ու վերջ ունեցող, նաեւ ներքուստ անընդհատ ընդլայնվելու հնարավորությամբ ամբողջական երկի տպավորություն: Պատմվածքի, նորավեպի, էտյուդի, փաստագրության, հուշագրության, ուղեգրության, օրագրության, փաստի արձանագրության, դեպքերի նկարագրության, խորհրդածության, զգացմունքային զեղման, քնարական բռնկման եւ այլնայլ գրառումների խառնուրդ հիշեցնող այս երկն ունի ասելիքի նպատակաուղղված ընթացք, ինչը եւ դառնում է այս գործի առանձին դրվագները միավորող դիպաշարային առանցքը: Հայ եւ Հայաստան, հայրենիք եւ տուն, սփյուռք եւ օտարություն, ազգային ճակատագիր եւ պատմության դասեր՝ ահա խոսքի այն հիմնական շրջան, որ առանձին դեպքերի օրինակներով շարադրում է Պետրոսյանը: Արդյունքում ստեղծվում է ժամանակի հայ մարդու հավաքական կերպար եւ հայ կյանքի ու Հայաստանի իրական պատկեր:

«Հայկական էսքիզներ»-ն ունի իր գլխավոր հերոսը, որը հեղինակն է: Առարկայական աշխարհը, կյանքն ու իրականությունը բեկվում են նրա էության մեջ, եւ նրա վերաբերմունքի անմիջական դրսևորմամբ են իմաստավորվում տեսած, լսած դեպքերն ու պատմությունները: Հեղինակային վերաբերմունքը, հեղինակային խոհը, զգացմունքայնությունը, լուրջությունը դառնում են նյութն իմաստավորող, նաեւ նյութի տարբեր մասերի միջեւ կապ ու ընդհանուր տրամաբանվածություն ստեղծող կարելու

գործոններ: Այդ ամենն իրենց հերթին ձեւավորում են հերոսի կերպար, որը վերաճում է հեղինակային ենթակայության եւ ընդհանրացված ձեւով ներկայացնում հայրենիքի այսօրվա կենսական հոգսերով մտահոգվող եւ հայ ու Հայաստան ըմբռնումների ներկա վիճակը ճանաչել ցանկացող ժամանակակից հայ մարդու մի բնորոշ նկարագիր:

«Հայկական էսքիզներ»-ի ամեն մի ընթերցող կարող է մի նոր դրվագ ավելացնել հեղինակային պատումին եւ նրա հետ միասին ստեղծել, ամբողջացնել այն խճանկարը, որի ուրվագծերը, ըստ էության, ներկայացնում են այսօրվա մեր ժողովրդի կյանքը, նրա ազգային մտածողության ու հոգեբանության հատկանշական պատկերը:

«Հայկական էսքիզներ»-ի ստեղծագործական կողմնորոշումը բնորոշ է նաեւ Պետրոսյանի ուղեգրություններին («Կարսից մինչեւ Տրոյայի ավերակները», «Մի կտոր Հայաստան...», «Տուն՝ մեր չնկմած զավակների համար») ու հրապարակագրությանը («Ոչ միայն հացիվ...», «Եվ մի օր ձեր զավակները կհարցնեն. «Որտեղ է մեր տունը...», «Դու պիտի գաս Հայաստան»): Նշված ստեղծագործությունները կարող էին «Հայկական էսքիզներ»-ի մասը կազմել, որովհետեւ նրանց կյանքի փաստի ազդակն է եւ հեղինակային նույն դիրքորոշումը: Ընդհանրապես, կյանքի հավաստի փաստի առկայությունը Պետրոսյանի ստեղծագործության կարեւոր բաղադրիչներից է՝ առկա տարատեսակ գործերում:

Պետրոսյանի պատմվածքների ու վիպակների, ուղեգրությունների ու խոհագրությունների, ակնարկների ու հրապարակագրության մեջ ձեւավորվում ու ամբողջանում է ընթացիկ իրականության բնորոշ վիճակներով ապրող հերոսի մի նկարագիր, որ մեր օրերի մարդն է, մեր ժամանակակիցը:



Կարելի է ավելի մեծ վարպետությամբ ու խորությամբ պատկերել այդ հերոսներին, ավելի ծանրակշիռ հոգեբանական ու փիլիսոփայական ենթաշերտ հաղորդել խոսքին՝ սա գրական երազանք է, բայց որ մեր շրջապատում կան այս նկարագրի տեր մարդիկ, անառարկելի իրողություն է, եւ բնական է, որ նրանք իրենց գեղարվեստական արտացոլումը պետք է գտնեն ժամանակակից գրականության մեջ: Նոր նյութի հեղինակությունը բարձրացնելու համար հարկավոր է պատկերվող կյանքի գեղարվեստական յուրացումը ներքաշել կյանքի արմատական ենթաշերտերի մեջ, առավել ուժեղացնել հանրային հնչեղությունը եւ ներքին հոգեբանական, փիլիսոփայական տարողությունը: Իհարկե, դժվար է ընթացիկ կյանքը, մեր առօրյայի նյութն առանց ժամանակի գտնան անմիջապես դարձնել գեղարվեստական իրականություն: Դժվար է, բայց նաեւ անչափ կարեւոր, որ երբեք չի կարելի հետաձգել:

Վարդգես Պետրոսյանի ստեղծագործությունն աչքի առաջ էր: Նա 1975–1988 թթ. Հայաստանի գրական կազմակերպության ղեկավարն էր, եւ նրան հաճախացողները քիչ չէին, ինչը վերաժվում էր քծնախոսության ու քծնագրության, որոնց ամուսն էր ելույթ ու գրախոսություն, զեկույց ու հողված: Ինքը՝ Պետրոսյանը, այդ պահանջն ուներ, որպեսզի իր դիրքերն ամրապնդեր ոչ միայն որպես կազմակերպիչ, այլեւ ստեղծագործող: Այս ընթացքում չափա-

զանցություններ, գերազնահատություններ շատ եղան: Քծնախոսով տառապող բոլոր այդ ՄՏԳ-ներին թողած մի կողմ, ովքեր աշխատում էին տեղական սպառման համար եւ Պետրոսյանի ձեռամբ շրայրորեն մատուցվող պետական միջոցներով (պաշտոններ, մրցանակներ, բնակարաններ, ուղեգրեր եւ այլն) քայլ առ քայլ ելնում աշխարհի շալակը, ուզում են անդադառնալ միութենական նշանակության եւ բավականին հայտնի համանման մի կերպարի, ում անունն է Ալեքսանդր Միխայլով: Ահա, ըստ նրա՝ Վ. Պետրոսյանի «Միայնակ ընկուզենին» վեպը խեցիի մեջ մնացած մարգարիտ է, որ ինքն է հայտնաբերել:

Եթե տեղական զազրախոսների չափը «դոզայի բարձրացումն» էր՝ չափազանց գովեստը, ապա սա Պետրոսյանի վեպը մի այնպիսի գրական շրջապատի մեջ է դիտում, որտեղ ժամանակի նշանավորներն էին Չինգիզ Այծատովը՝ «Եվ դարից երկար ձգվում է օրը», Յուրի Բոնդարենը՝ «Ընտրություն» վեպերով, Վալենտին Ռասպուտինը՝ «Հրաժեշտ Մատյորային», Վլադիմիր Լիչուտինը՝ «Վերջին կախարհը» վիպակներով եւ ուրիշներ: Եվ այս ամենի հիմքը ոչ թե արվեստն է, այլ բովանդակության առանձին կողմերի նմանությունը կամ տարբերությունը: Այսինքն՝ այն, ինչին ասում են «թեմա», մի բան, որ դեռես իր «Մանկություն» պոեմում Չարենցն է ծաղրել: Ի՞նչ կա որ, եթե մանկության «թեման» է, ուրեմն կարելի է տեղական նշանակության գրողների անունները հիշատակել համաշխարհային նշանակության մեծերի կողքին: Եղավ: Իհարկե՝ չեղավ: Եվ սա եւ նշում են, որովհետեւ Պետրոսյանի դեպքում թե՛ չափազանցելիս, թե՛ թերազնահատելիս կորչում է եղած արժեքավորը: Շրջանակը մեծացնելիս նկարը մեջը լողում է, փոքրացնելիս չի տեղավորվում, ուրեմն շրջանակի չափը պետք է ճիշտ ընտրել: Այդպիսին է նաեւ գրողին ուղղված հայացքը՝ լինի կարծիք թե՛ քննադատական հողված:

Շարունակելի

Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

«Ակունքի» ակունքներում



Սկիզբը՝ թիվ 19

Առաջին հյուրախաղը

1979-ի հուլիսն էր: Նախքան Հեռուստատեսության եւ ռադիոյի խումբ դառնալը «Ակունքի» հովանավորությունն ստանձնել էր երեւանի ուսուցչի տունը, որն էլ խմբին ապահովեց առաջին բեմական հագուստներով եւ կազմակերպեց Հայաստանից դուրս առաջին ելույթը:

Երեւանում մոլեգնող հուլիսյան ամառների տապից հետո կարծես հրաշքով մեկ շաբաթով հայտնվել էինք Բալթիկ ծովի զով ու անձրեւոտ ավերին՝ Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում: Տեղի Ուսուցչի տան հրավերով էր կազմակերպվել մեր առաջին հյուրախաղը:

Առաջին ելույթը կազմակերպվեց Տալլինի հին հրապար-

ակում՝ Ռատուշայում: Միջնադարյան կոլորիտով փոքրիկ հրապարակը ընդամենը երեք հարյուր մետր էր «տարաշխարհիկ» մեր խմբին լսելու ցանկություն ունեցող հանդիսատեսներով: Մեզ համար անչափ հետաքրքիր էր տեսնել, թե ինչ արձագանք են ստանում մեր հիմնավոր երգերը մեզմիջ բավական տարբերվող լեզու եւ մշակույթ ունեցող խորհրդային այդ հանրապետությունում:

Մերձբալթյան ժողովուրդները՝ ներառյալ էստոնացիները, ավանդաբար հետաքրքրվում էին Հայաստանով եւ նրա մշակույթով, ուստի մեր խումբն էլ մեծ հետաքրքրությամբ եւ ջերմությամբ ընդունվեց:

Հաջորդ ելույթը կազմակերպվեց մի քանի օր անց՝ Տալլինի արվարձանում գտնվող ազգագրական թանգարանի տարածքում՝ տեղի ազգագրական խմբի հետ համատեղ: Մենք եւ մեր բարեկամները անգամ համապատասխան մի քանի պարերի փոխադարձ մասնակից դարձրինք միմյանց: Եվ որքան անմիջական ու ինքնաբերական էր այդ ամոռնաց հանդիպումը, որին հաջորդեց երեկոյան զբոսանքը Բալթիկ ծովի ափին՝ ամոռնանալի սպիտակ գիշերվա լույսի տակ...

«Խայտառակ» պատմություն «Ակունքում»

1980-ին նկարահանվեց «Ակունքի» մասին երկրորդ՝ ավելի լուրջ ֆիլմ-համերգը՝ «Երգի վերադարձը»: Ռեժիսորն այս անգամ ճանաչված բեմադրիչ Ալեքսանդր Քաջվորյանն էր, որ ստեղծագործական նախկին խմբի հետ էր աշխատում:

1981-ին ֆիլմը ցուցադրվեց Երեւանում կայացած Հեռուստաֆիլմերի համամիութենական կինոփառատոնում եւ արժանացավ առաջին մրցանակի: Որքան էլ տարակուսանք առաջացնեի տեղեկատվության երկրորդ մասը,

ակունքներիս համար, իհարկե, հպարտության առիթ էր նման նշանակալի մրցանակի արժանանալը...

Իսկ նախքան փառատոնը՝ Լրագրողի տանը կազմակերպվեց ֆիլմի առաջին ցուցադրությունը: Մտավորականների համար «Ակունքի» մատուցած ճոխ համերգից հետո հայտարարվեց տասը ընդմիջում, որի ընթացքում ակունքիներս պետք է զգեստափոխվեինք, ապա դահլիճ վերադառնայինք եւ դիտեինք ամիսներ շարունակ սպասած ֆիլմը:

Սակայն այստեղ տեղի ունեցավ չսկսված-չտեսնված մի բան, որ այլ երաժշտախմբերում զուցե եւ սովորական երեւույթ էր... Արեգմազն ու Գայանեն առաջինը վազեցին զգեստափոխության միակ սենյակ եւ հայտարարեցին. «Նախ՝ աղջիկները», բայց Արգարն ու Արկադին էլ էին արդեն սենյակում հայտնվել եւ ոչ պակաս համառությամբ արձագանքեցին. «Նախ՝ տղաները», եւ արագ սկսեցին հանել տարազները: Մի քանի վայրկյանում սենյակ մտած բոլոր տղաներն արդեն հանվում էին... Սակայն աղջիկներն այս հարցում պարտվողը չէին, եւ սենյակի մյուս հատվածում էլ իրենք էին զգեստափոխվում...

Այդպես մենք առաջին անգամ այդպիսի «խայտառակ» պատմության մեջ ընկանք՝ ձգտելով ավելի շուտ հասնել ֆիլմի դիտմանը, սակայն, ինչպես Մարոն ասաց, նախ՝ մենք վաղուց արդեն հարազատներ ենք, երկրորդ՝ դա շատ առօրեական երեւույթ է պրոֆեսիոնալ համայնքներում, որին երբեմն պետք է «ընտելանանք», չէ՞ որ մենք էլ ենք արդեն պրոֆեսիոնալ դառնում:

Արեգմազի «մահը». մենք արդեն շատ ճանաչված խումբ ենք

«Կտրիճ Դավոն», ավելի ճիշտ՝ «Մելիք Դավոն» եւ Ռուդիկը ձայնագրեցինք Հանքավանի հանգստյան տներից մեկում՝ խմբի արտասահմանյան առաջին ուղեւորությանը պատրաստվելու օրերին: ➔ էջ 7, 8

«Ակունքի» ակունքներում

← էջ 6

Ճաշարանի ավագ խոհարարուհի Օսան Դարմանյանը, հերթական քառյակը երգելուց հետո զուռնայի ձայնին նմանակելով, պարելով մի քանի պտույտ էր կատարում իր բարձրակրունկ կոշիկներով, ապա շարունակում երգը: Գեղեցկական այս պարզ ու անմիջական երգի մասին, կատակի համար, Մարոյին պատմեցին: Չարմանալիորեն Մարոյին շատ հետաքրքրեց այդ երգանմուշը: լսեց, բառերը մշակեց՝ դարձնելով Կտրիճ Դավոյի սիրո համար կոշիկ երկու գեղեցկուհիների զավեշտալի պատմություն, որ ուղեկցվում էր զուռնայի զրնգուն նվագակցությամբ, խանդավառ պարերով:

1980-ի Ամանորի հեռուստահամերգին մասնակցելու համար, որքան էլ զարմանալի էր, մեզ հենց այս երգով հրավիրեցին: Նկարահանման ընթացքում Նորի հեռուստակայանի գրեթե ողջ աշխատակազմը հավաքվել էր մեր նկարահանման տաղավարում: Կտրիճ Դավոյն Հարություն Փանոսյանը, գեղեցկուհիներ Արեգնազ Միքայելյանն ու Վերժինե Աղազարյանը, ողջ խումբը ոգեւորված մերկայացնում էին տարվա հիթը դառնալու հավակնություն ունեցող այդ համարը:

Ի զարմանս շատերիս՝ ժողովուրդն այնպիսի ոգեւորությամբ ու սիրով ընդունեց «Կտրիճ Դավոն», որ շատ շուտով այդ պարեղանակն ամենուր դարձավ հարսանիքների եւ ուրախ միջոցառումների զարդը:

Երգի հանրահայտության այդ շրջանում էլ առաջին հայացքից տարօրինակ, բայց իրականում նաեւ «Ակունքի» հանրաճանչության մասին վկայող մի «խրադարձություն» տեղի ունեցավ: Որտեղից-որտեղ ավտովթարից զոհվելու պատմություն վերագրվեց մեր Արեգնազին՝ «Կտրիճ Դավոյի» գլխավոր հերոսուհուն: Աշխատավարում, տրանսպորտում, ուրախ թե տխուր միջոցառումների ժամանակ միշտ մի ծանոթ, կիսածանոթ կամ անծանոթ հարցնում էր «Ակունքիներին»: «Մի բան հարցնեմ. ձեր խմբի էն աղջիկը...»: Մենք, իհարկե, առանց միմեկին վերջ լսելու՝ կարճ էինք կապում. «Չէ, չէ, նման բան չկա: Միայն տեղեկություն

է...», բայց ամիսներ շարունակ լուրերը պտտվում էին ու պտտվում...

Հետո հասկացանք, որ այդ տարիներին երբեմն-երբեմն ՕՖԵԼյա Համբարձումյանին, Գոհար Գասպարյանին եւ նշանավոր այլ արվեստագետների պարբերաբար «թաղող» ժողովրդի մի ստո-

մերկայացնել խումբը նման հեղինակավոր փառատոնին:

Նոյեմբերի սկզբին արդեն Մոսկվայում էինք: Փառատոնի կազմկոմիտեում արդեն նախնական լուծումներ էին եղել, եւ այլ երաժշտախմբերի երկու-երեք համարի փոխարեն «Ակունքին» եւ Սիբիրից ժամանած տատիկ-



րին հատվածի մտքով միեւնույն մոլագար մղումով այս անգամ անցել էր «Ակունքի» արդեն ճանաչված մեմակատարին «այն աշխարհ ուղարկել»...

— Ժողովուրդ, չնեղստեք,— մի օր ասաց Սարգիսը,— դա ընդամենը նշանակում է, որ մենք արդեն շատ հանրահայտ խումբ ենք:

Մոսկովյան չկայացած ելույթը

1982-ի աշնանը «Ակունքում» կրկին ելույթ էր: Այս անգամ հրավիրվել էինք Մոսկվայի համամիութենական ֆուլկլորային փառատոնին, որ կազմակերպվել էր ԽՍՀՄ-ի կազմավորման 60-ամյակի առթիվ: Մարոն որոշել էր լավագույն ծրագրով

մերի ազգագրական խմբին հնգական համար էին հատկացրել: Ոգեւորված Մարոն փորձերն անցկացնում էր օրական երեք անգամ, բացառություն եղավ միայն նոյեմբերի 10-ի երեկոն, երբ ողջ խմբի խնդրանքով փորձի փոխարեն մշտեցինք մի քանի օրը:

Հաջորդ առավոտյան, երբ խումբը կրկնապատկված ոգեւորությամբ եւ զրնգուն ձայնով երգում էր «Մաքրուհի ջան, Մաքրուհի» կատակերգը, անսպասելիորեն Մարոյի սենյակ մտավ մեզ հետ փառատոնին հրավիրված Կոնսերվատորիայի դասախոս, երաժշտագետ Հասմիկ Էլոյանը եւ նստածների միջով գգուշավորությամբ անցնելով՝ Մարոյին մոտեցավ: Հասմիկը Մարոյի ականջին ինչ-որ բան շշմջաց, որը տառացիորեն շանթահարեց մրան:

— Երբ...

— Առավոտյան ութն անց կեսին եմ հաղորդել— պատասխանեց Էլոյանը:

Իմ եւ, ինչպես հետո պարզվեց, խմբի անդամներից շատերի մտքով անցավ, որ հավանաբար Միացյալ Նահանգները պատերազմ է հայտարարել խորհրդային Միությանը, եւ ուր որ է պայթող ռումբերի ու իրթիմների ձայներ կսլվեն խորհրդային մայրաքաղաքում...

Մոտիկ նստածները, սակայն, շուտով բացահայտեցին գույժի իրական բովանդակությունը՝ «Բերժմենն է մեռել»...

Փառատոնը, իհարկե, չկայացավ, բոլոր խմբերը վերադարձան իրենց քաղաքներն ու գյուղերը, բայց Սարգիսը տղաներին հավաքեց իր սենյակ եւ բացած կոնյակի շուրջ հանդիսավոր հայտարարեց.

— Տղերք, հիշե՛ք՝ մարդկության պատմության մոր ժամանակաշրջան է սկսվում:

«Նոր ժամանակաշրջանը», Սարգսի մարգարեությամբ, իհարկե, սկսվեց, սակայն թե ինչով էր լավ լինելու նախորդից եւ ինչով վատ, այդ ժամանակ ոչ մեկս չէր կարող պատկերացնել...

Ակամա «թափառաշրջիկ» դարձած երգիչները

Երեկոյան փորձերից հետո հաճախ տուն էինք գնում երեքով՝ ես, Աննա եւ Վարդուհին: Վարդուհին մեր թաղամասում էր ապրում, իսկ Աննան մեր ճանապարհի վրա՝ «Մերգեյլան» ինստիտուտի մոտակայքում:

Մի օր որոշեցինք Ռադիոտնից ոտքով քայլելով՝ Բաղրամյանով բարձրանալ, սակայն հասնելով փողոցի սկզբնամասերում գտնվող Տեխնիկայի տանը՝ Աննան առաջարկեց բակի ցայտաղբյուրից ջուր խմել: Թեեւ արդեն երեկոյան տասն անց էր, որոշեցինք մի քիչ էլ բակում դրված նստարանին նստել, հանգստանալ:

— Անն, կիիշեցնե՞ս «Քեսաբի օրորը»,— խնդրեց Վարդուհին, եւ ամեն ինչ սկսվեց հենց այդ ճամնատվորական խնդրանքից:

Աննան մախ հիշեցրեց իր հայրենի Քեսաբում մանկությունից լսած երգի նրբերանգները, հետո երգեցին երկուսով, իսկ հաջորդ երգին ես էլ ոգեւորված միացա: ← էջ 8

ՄԱՐԿ ԿՈՐԼԵՐ

← էջ 3, 5

Հատվածների մանրամասները հաստատում են մեր եզրակացությունը: Նախ, «ավազակ» բառը ոչ ճիշտ թարգմանություն է: Հունարեն երկու «գող» եւ «ավազակ» բառերից միայն վերջինն են գործածում Մարկոսն ու Մատթեոսը: Արդ, այն ժամանակվա հրեական պատմության հետնախորքում «ավազակ» բառը ձեռք է բերում մի հատուկ իմաստ. դա տեխնիկական եզր է, որով ինչպես հրեա պատմաբան Հովսեփոս Փլավիոսը, այնպես էլ այդ ժամանակաշրջանի ռաբինական գրականությունը անվանում են գելտոներին: Վերջիններս իսկապես զբաղվում էին ավազակությամբ. նրանք իրենց իրավասու էին համարում բռնի հարկ վերցնելու՝ ի նպաստ իրենց ազգային ազատագրական պայքարի: Հետագայում այդ քիչ հաճելի «ավազակ» բառը դարձավ փառքի տիտղոս (Հովսեփոս Փլավիոսը, որը հռոմեացիների հետ համագործակցում էր, գելտականությանն ամենեւին չէր համակրում):

Բայց այդ բառը նման իմաստ ուներ միայն հուդայականության հետ կապեր ունեցող մարդկանց շրջանում: Այլուր նա նորից ստանում էր իր սովորական իմաստը: Արդյո՞ք դա է պատճառը, որ Ղուկասը խուսափում է այդ բառից: Նա այն փոխարինում է «չարագործ» շատ ընդհանուր բառով. հելլենիստական հասարակությունը, որին նա դիմում է, չէր կարող պատկերացնել մեծ ճանապարհների ավազակների... Ինչ վերաբերում է չորրորդ Ավետարանին, այնտեղ այդ բառն ամբողջովին հանված է, եւ խոսվում է «մրա հետ երկու ուրիշների» մասին: Մի Ավետարա-

նից մյուսը՝ ավելի մեղմ բառ է գործածվում: Արդյո՞ք պատճառն այն երկուսն է, թե այդ բառը հանկարծ չհասկանա գելտ իմաստով:

Բարաբբայի՝ ազատ արձակված բանտարկյալի կերպարը դրան ավելացնում է մի արժեքավոր մանրամասն: Ըստ Մատթեոսի՝ Բարաբբան հայտնի անձ էր: Մարկոսն ու Ղուկասն ասում են, որ նա սպանություն էր կատարել մի խռովության ժամանակ: Մարկոսը մեզ տեղեկացնում է նաեւ, որ մրա հանցակիցները եւս բանտարկված էին: Իսկ Հովհաննեսը մրան անվանում է «ավազակ»: Այդ բառն այստեղ կիրառվում է մի մարդու համար, որի արարքները գելտի արարքներ են, ինչը հաստատում է մեր ասածը, քանզի մենք իմանում ենք, որ Բարաբբայից բացի, որը գելտների ենթադրյալ ղեկավարն էր, Պիղատոսի զննանքներում ուրիշ գելտներ եւս կային: Շատ հնարավոր է, որ Հիսուսի երկու կողմերում կախված մարդկանց վերցրել էին մրանց միջից:

Ասենք, դա հատվածից է երեւում: Ղուկասի Ավետարանում (23—32) ասվում է. «Մինչ շարայունը շարժվում էր դեպի Գողգոթա, բերվեցին նաեւ ուրիշ երկու չարագործներ՝ Նրա հետ սպանվելու»: Բոլոր ժամանակներում այդ նախադասությունը զարմանք է հարուցել: Ո՛չ «մաեւ», ո՛չ «ուրիշ» բառերը չեն կարող գործածվել Հիսուսի նկատմամբ, քանզի Նա անմեղ է: Սովորաբար բացատրում են այսպես. «Բերեցին նաեւ երկու ուրիշ մարդկանց, որոնք, ի դեպ, չարագործներ էին...»: Բայց Ղուկասը մի քանի տող վերեւ խոսում է խռովարար ու մարդասպան Բարաբբայի մասին: Արդ, ին-

չհի «մաեւ» եւ «ուրիշ» բառերը չհասկանալ այնպես, որ դրանք ակնարկում են Բարաբբային. Բարաբբայի նման խռովարար ու ավազակախմբի անդամ գելտներն այդ տխուր թափոթի առջեւում էին: Չարագործները գելտներ էին. դա օգնում է Հիսուսի ու մեղանշող չարագործի միջեւ երկխոսությունն ավելի լավ ըմբռնելուն (Ղուկ. 23. 39—43):

Իր տեսակի մեջ այդ չարագործը վատ անձնավորություն չէ: Եթե կողոպուտներ ու մահափորձեր էր կատարել, ապա համուն մի շարժման, որը միանգամայն բնականոն էր համարվում: Զելոտների միակ սխալն այն էր, որ իրենց նպատակները խառնում էին Աստծու նպատակներին ու գործում էլնելով իրենց գաղափարներից այնպես, ասես դրանք ստացել էին երկնքից... Արդո՞ք Հիսուսը մրանց նկատի ուներ, երբ խոսում էր այն մարդկանց մասին, որոնք բռնի ձեռով են վերցնում Աստծու թագավորությունը: Ամեն դեպքում «բռնի» բառը լավ է բնութագրում մրանց: Բռնություն մեթոդների մեջ, մանավանդ՝ իրենց մտածողության, որն իրենց դրդում է գործել: Հեռու լինելով Աստծու միջամտությանը սպասելուց՝ մրանք առաջ են անցնում Նրա որոշումներից՝ ճակատագրական անհամբերություն ցուցաբերելով: Արդ, արդյո՞ք մենք եւս նման ձեռով չենք վարվում: Աստված ունի Իր ծրագիրը, բայց մենք անհրաժեշտ ժամանակ չենք հատկացնում այն հասկանալու համար: Աստված գործելու է, բայց մենք շտապում ենք անել բաներ Նրանից առաջ: Աստված մի բան է մտածում, բայց մենք մախընտրում ենք այլ բան՝ մեր հարմարության համար: Ու տարվում ենք այն պատ-

րանքով, թե իրականացնում ենք Աստծու մտադրությունները...

Իմանալով գելտական մտածողության որոշ քնահաճությունների մասին՝ մենք մեզ ավելի մոտ ենք զգում խաչված գելտին: Նրա մեղանշման պատմությունը հեշտությամբ կարող է մերը դառնալ: Համոզվելով, որ այդ մարդը գելտ է, մենք ավելի լավ ենք հասկանում մի խաչից մյուսը փոխանակվող որոշ խոսքերի իմաստը: Դա, մի կողմից, բացատրում է այն ճշգրիտ իմացությունը, որ մեր մարդն ունի Հիսուսի ու Նրա ուսմունքի մասին, մյուս կողմից՝ ճշգրտվում է այն իմաստը, որ Հիսուս Իր պատասխանի մեջ տալիս է «դրախտ» բառին:

Մինչ առաջին չարագործը ծաղրում է Հիսուսին, մյուսը սաստում է ընկերոջը, հետո դառնում կենտրոնի խաչին: Նա իր խնդրանքն ասում է Հիսուսին հավատալով: Ավետարաններում ընդհանրապես ոչ ոք չի դիմում Հիսուսին միայն անունով: Նրան անվանում են Հիսուս Նազովրեցի (Մարկ. 1. 24), Հիսուս՝ Աստծու Որդի (Մարկ. 5. 7) կամ Տեր Հիսուս (Ղուկաս 17. 13): Ղուկաս 23. 42-ը միակ հատվածն է, ուր մի մարդ ուղղակի ասում է՝ «Հիսուս»: Այդ մտերմիկ դիմելաձեւը հասկանալի կդառնա, եթե իմանանք, որ Հիսուս Ինքը կապեր է ունեցել գելտականության հետ, որից, սակայն, կտրուկ հեռացել է: «Չարագործը» արդյո՞ք իմացել է Հիսուսին նախկինում: Արդյո՞ք լսել է Նրա ուղերձը ու փորձել թափանցել Նրա անձի մեջ կամ ըմբռնել Նրա հայացքները:

Շարունակելի

Ֆրանսերենից թարգմանությունը՝
Գառնիկ ՄԵԼՆԻՅԱՆԻ

Հ. Թումանյանի հասարակական գործունեության վերջին շրջափուլը եւ Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ) 1921–1923 թթ.

← էջ 4

1920-ական թթ. սկզբին ՀՕԿ-ի տրամադրած գումարներով իրականացվում են հայրենադարձներին բժշկական օգնություն ցուցաբերելու, պարենով, աշխատանքով եւ ապաստանով ապահովելու միջոցառումներ, ինչպես նաեւ Հայաստանում ոռոգելի հողատարածքների ընդլայնմանն ու բերքատվության բարձրացմանը միտված այնպիսի մշանակալից աշխատանքներ, ինչպիսիք էին Եվջիլարի (*Կոչվել է Եվջիլար (այժմ՝ Արագած, ՀՀ Արմավիրի մարզ) գյուղի անունով. սկիզբ է առնում Արաքս գետից եւ ոռոգում հիմնականում Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի հողերը*) եւ Հիրակի ջրանցքների կառուցումը, Արարատյան դաշտի ճահիճների չորացումը:


Հիրակի ջրանցքն սկիզբ է առնում Ախուրյան գետից՝ ՀՀ Երևանի մարզի Կապս գյուղի մոտակայքից: Կառուցվել է 1922–1925 թթ.: Ոռոգում է Հիրակի մարզի շուրջ 9,8 հզ. հա հողատարածք: Հիրակի ջրանցքի (Հիրկանալ) մեծ ու հանրօգուտ շինարարությունն է գովերգել բանաստեղծ Հակոբ Հակոբյանն իր հայտնի «Բուլշեիկ է Հիրկանալը» պոեմում: Հիրակի ջրանցքի շինարարությանն են մվիրված Գուրգեն Մահարու «Հիրակի ջրանցքը», Ն. Զարյանի «Ջրանցքի կապույտ երկրում», Մկրտիչ Արմենի «Հիրկանալը», «Կանալը», «Կանալը Լեւինականի» գործերը: Ապա լույս են տեսնում Գ. Սարյանի «Հիրակի հարսանիքը», Սարմենի «Դաշտերը ժպտում են» բանաստեղծությունները: Հիրակի ջրանցքին պոեմներ են մվիրել Ալազանը՝ «Հիրակի դաշտ», «Հիրկանալ», Սողոմոն Տարոնցին՝ «Լուկաշին»: Հիրակի ջրանցքի շինարարության պետի տեղակալ Արմենակ Հովսեփյանը շինարարությանն ակտիվորեն մեծ է մվիրել իր «Հիրակի ջրանցքը» գրքով, որը լույս է տեսել 1924 թ.: 1925 թ. Եղիա Չուբարը լույս է ընծայում իր «Ջրանցքներ» գրքով, Եղիշե Չարենցը լույս է ընծայում իր «Գյումրի» պոեմը: Ջրանցքի բացման հանդիսավոր արարողությանը (1925 թ. հունիսի 21) մասնակցել է նաեւ նորվեգացի մշանավոր բեռնախույզ, գիտնական,

հասարակական գործիչ, մեծ հումանիստ եւ հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը:

ՀՕԿ-ի ուշադրությունից չեն վրիպել նաեւ նախադարձական հաստատությունները: Կառուցվել ու կահավորվել են մանկապարտեզների ու մանկամստուրների մոր շենքեր, հագուստ եւ սննդամթերք են տրամադրել նրանց:

1922 թ. ՀՕԿ-ի նախագահությանն է փոխանցվում Ջանգիրասարի (հետագայում՝ Մասիսի) շրջանի Իմամշալու (Իմամշալուն (Իմամշալու, Իմամշահիլ, Իմամշահիլ) ներկայիս Արարատի մարզի Արտաշատի տարածաշրջանի Մխչյան (03. 01. 1935 թվականից, անվանակոչվել է ի պատիվ այստեղ գտնված Հայկական հրաձգային առաջին դիվիզիայի քաղղեկ Լիպարիտ Մխչյանի) գյուղն է: Բնակիչների մի մասի նախնիներն այստեղ են եկել 1828–1829 թթ. Պարսկահայքի հույի ու Սալմաստի գյուղերից: 1897 թ. ուներ 1177 հայ բնակիչ, 1926 թ.՝ 1104, 2005 թ.՝ 5021) եւ Ուլուխանլու (Ուլուխանլուն (Ուլուխանլի, Ջանգիրասար, Նարինանլու, Հրազդան) ներկայիս Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի կենտրոն Մասիս քաղաքն է: Բնակիչների մի մասի նախնիներն այստեղ են եկել 1828–1829 թթ. Պարսկահայքի հույի ու Սալմաստի գյուղերից: 11. 06. 1955 թ. վերանվանվել է Հրազդան: 31. 07. 1950 թ. նախկին Ուլուխանլու երկաթուղային կայարանին կից ավանը վերանվանվել է Մասիս: Հետագայում այս երկու բնակավայրերի միացումից ստեղծվել է Մասիս քաղաքատիպ ավանը, որը 1995 թ. ստացել է քաղաքի կարգավիճակ: Ուլուխանլուն 1897 թ. ուներ 2800, 1926 թ.՝ 2093, 2015 թ.՝ 20500 բնակիչ) գյուղերի դպրոցների վերանորոգման ծախսերի նախահաշիվը՝ խնդրելով տրամադրել 1816 ռուբլի: Խնդրանքը բավարարվում է, եւ վերոհիշյալ գյուղերի դպրոցները վերանորոգվում են:

1922–1923 թթ. ՀՕԿ-ը պարբերաբար հագուստի եւ գրենական պիտույքների տեսքով օգնություն է տրամադրել Աշտարակի եւ Օշականի պետական դպրոցներին,



օժանդակել Կոչ գյուղի դպրոցի կառուցմանը: 1923–1924 թթ. ՀՕԿ-ը մեծաքանակ ապրանքներ ու դրամական օգնություն է տրամադրել Հանրային գրադարանին, Երեւանի համալսարանին, մեծահասակների արհեստանոցին, անապաստան երեխաներին, Ապարանի չքավոր գյուղացիությանը, Ջանգեզուրի ու Ղարաբաղի լուսաբժիշկներին, այլեայլ կրթամշակութային հիմնարկների: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը ձգտում էր հնարավորության սահմաններում աջակցել նաեւ Ղարաբաղի հայությանը: Ուշագրավ է, որ ՀՕԿ-ը, փաստորեն, Ղարաբաղը համարում էր խորհրդային Հայաստանի անբաժան մաս եւ օգնություն էր տրամադրում նաեւ Ղարաբաղի դպրոցներին: 1920 թ. նոյեմբերի 10-ին կայացած ՀՕԿ-ի գլխավոր վարչության նիստի արձանագրությունից պարզվում է, որ Ղարաբաղի դպրոցների կարիքները հոգալու համար տրամադրվել են մեծաքանակ գրենական պիտույքներ:

Այսպիսով՝ մշանակալի է Հ. Թումանյանի ավանդը ՀՕԿ-ի կայացման եւ կազմակերպության նպատակների արդյունավետ իրականացման գործում: Հ. Թումանյանի

նախագահության տարիներին ՀՕԿ-ը, իր առջեւ դրված նպատակների իրականացման շրջանակներում, աշխատանքներ է տարել կարիքավոր բնակչության համար պարեն, հագուստ, դեղորայք եւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ձեռք բերելու եւ բաշխելու համար, Սփյուռքի եւ հայրենիքի միջեւ կապերն ամրապնդելու, Խորհրդային Հայաստանում շինարարական ու մշակութային ձեռնարկումներ իրականացնելու, հայրենադարձության կազմակերպման, հայրենադարձների համար հայրենիքում մոր ավանների ու բնակավայրերի շինարարության ուղղությամբ: Փաստորեն՝ ՀՕԿ-ը մեծապես նպաստել է Հայաստանի վերականգնմանն ու վերելքին, տնտեսական, գիտական եւ կրթամշակութային կյանքի աշխուժացմանն ու զարգացմանը, նպաստել է մոր աշխատատեղերի ստեղծմանը, շինարարական աշխատանքների ծավալմանը, սովի ու համաճարակների հետեւանքների հաղթահարմանը, գրագիտության տարածմանը, մշակույթի պահպանմանն ու զարգացմանը:

ՀՕԿ-ի գլխավոր վարչության առաջին պատվավոր նախագահ Հ. Թումանյանը, անտեսելով իր վատառողջ ու տկար վիճակը, շարունակում էր օգնել հայրենիքին: Ամբողջ գիտակցական կյանքում մեծ հումանիստը հավատարիմ մնաց իր իսկ պատգամին եւ ստեղծած-ավանդածով, վարք-վարմունքով ապացուցեց, որ գրիծն է անմահ: Այո, նա իր գործով ապրելու է դարեդար: Նա հավերժացավ իր կենսուրախ ու շենշող վերաբերմունքով՝ մինչեւ վերջին շունչը լույս ու ջերմություն սփռելով ամենուրեք, լույսով ու բարությամբ օժտելով, սրտապնդել-մխիթարելով («ողջադ կացեք») իրեն շրջապատողներին: Միով բանիվ՝ Թումանյանը համայն մարդկությանն է, նա համար է, որ չունի ազգություն: Նա Մարդ եկավ, մարդկության ու մարդկայնության համար ապրեց եւ արարեց ու Մարդ գնաց անարատ...

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«Ակունքի» ակունքներում

← էջ 6, 7

Երեկոյան լուծությունն ու բակի հաճելի կիսամութը այնպես տրամադրեցին, որ մեկիկ-մեկիկ սկսեցինք երգել «Ակունքի» ողջ երգացանկը: Մեզ թվում էր, թե ոչ ոք չի լսում, եւ ազատ ու անկաշկանդ երգում ու հաճելիորեն ունկնդրում էինք ինքներս մեզ:

Արդեն երեւի կես ժամ տեւած «համերգի» ամենաթեժ պահին հանկարծ հարակից այգու կողմից անսպասելի շշուկներ ու ոտնաձայներ լսեցինք եւ ինչ տեսնե՞ք՝ շենքի երկու տարեց պահակները, որոնք հավանաբար ծայրեծայր լսել էին մեր երգերը, իրենց մշակած ծառերի պտուղներից քաղել եւ մեզ համար անակնկալ էին պատրաստել:

Համերգ-հյուրասիրությունն ավարտեցինք հայրենասիրական մի խրոխտ երգով, եւ երբ վերջապես տուն էին գնում, Անին ասաց.

— Փաստորեն՝ թափառական երգիչների տպավորություն է թողեցինք...

— Բայց, միեւնոյն է, ծիրանն ու բալը շատ լավն էին,— ավելացրի ես:— Ես, օրինակ, չգիտեի, որ մայրաքաղաքի կենտրոնում նման համեղ մրգեր են աճում:

Դալալ մարեն

— Մայրիկս էլ է իր ծննդավայրում լսած որոշ երգեր հիշում,— մի օր տուն գնալիս ասաց Վարդուհին:— Բայց չգիտեմ՝ Մարոն կհավանի՞, երգառճը մի քիչ օտարահունչ է ոնց որ...

Ես գիտեի, որ Վարդուհու մայրիկը խութեցի է, մանկությունն անցել է Խութի Փիշոնք գյուղում, բայց որ վաղ մանկությունից երգեր է հիշում, չգիտեի: Մի քանի օր անց



«գիմվեցի» իմ հսկա ձայնագրիչով եւ հանդիպեցի Դալալ մարենին:

— Է, լա՛ն, առաջ աշխրբի տակ ինչքան երգ կար, գիտեի,— իմանալով գալուս նպատակը՝ ասաց նա,— հիմի մոռացեր իմ, մոռացեր...

Մեկ ամիս շարունակ հանդիպեցի այդ փոքրամարմին, բարի եւ անմիջական մարդին, զրուցեցինք նրա ծննդավայրի, մանկության շուրջ, պատմեց Մեղրագետի, Սեւսարի անտառներին իջնող քաղցրիկ մանայի, Երզնի բառ ու բանի, հինավուրց զրույցների մասին: Եվ այդ ընթացքում սկսեց հատիկ-հատիկ վերհիշել ժամանակին իր սովորած, ապա մոռացության վտանգի տակ հայտնված երգերը: Հիշեց «Յարիմո» երգի եզակի մի տարբերակ,

«Մեմզարե», «Նըրզո» սիրերգերը, «Հեյ-րուր» օրորը, «Աղջիկ էկավ Բուլանուխա» պարերգը... հիշեց ազգային-հայրենասիրական բազում երգեր, երգելով պարեց իր իմացած «Գորանին», «Փափուռին», «Բատուլան»... պարեց թեթեւ ու նազանքով, ինչպես տարիներ առաջ...

Եվ երբ այս ամենը ես ու Վարդուհին «Ակունքի» հերթական փորձին Մարոյին ներկայացրինք՝ թեթեւակի շտկած եւ լրացված բառերով, ոգեւորությունն անգերազանցելի էր: Շատ շուտով «Ակունքի» երգացանկը հարստացավ Դալալ մարենի երգած ավելի քան մեկ տասնյակ նորահայտ երգերով՝ Վարդուհու, Սարգսի եւ մեր շնորհալի մյուս մեծակատարների ձայնով, իսկ առաջիկայում հանրահայտություն ձեռք

բերող եւ բազմաթիվ երգիչ-երգչուհիների երգացանկերը «զավթող» «Աղջիկ էկավ Բուլանուխա» երգի առաջին կատարման պատիվը... ինձ շնորհվեց՝ խմբի մասին ֆիլմ-համերգի նկարահանման ժամանակ:

Այդպես մոռացությունից փրկվեց Տարոն աշխարհի Խութ գավառի հինավուրց երգերի հետաքրքիր մի ամբողջ շերտ...

Շարունակելի

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 2.11.2021 թ.

Տպաքանակը՝ 1225